# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

*Դիլիջան բնակավայր* *13.01.2025 թ.*

2025 թվականի հունվարի 13-ին՝ ժամը 12:00-ին, Տավուշի մարզի Դիլիջանի համայնքապետարանում տեղի ունեցավ «Դիլի» ՍՊԸ-ի կողմից նախատեսվող նոր անասնաֆերմայի և կենսագազի կայանի կառուցման ու շահագործման (այսուհետ՝ Ծրագիր) շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման վերաբերյալ հանրային լսում (երկրորդ փուլ):

Բացման խոսքով հանդես եկավ Դիլիջանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ Լիպարիտ Սանթրոսյանը: Նա ողջունեց մասնակիցներին, շնորհակալություն հայտնեց ներկա գտնվելու համար, ներկայացրեց հանրային լսման առարկան և խոսքը փոխանցեց «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ ՊՈԱԿ) գլխավոր մասնագետ Քրիստինե Հարությունյանին:

Ք. Հարությունյանը ներկայացավ, նշեց, որ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի համաձայն կազմակերպվել է նախատեսվող գործունեության վերաբերյալ երկրորդ հանրային լսումը, մանրամասն նկարագրեց փորձաքննական գործընթացը, նշեց, որ նախատեսվում է կառուցել ոչ միայն անասնաֆերմա, այլ նաև կաթնամթերքի արտադրամաս: Նա նշեց, որ գործունեությունն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան՝ մասնավորապես, «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան համայնքի և հարակից տարածքների զարգացման և ներդրումների խրախուսման մասին» օրենքին համապատասխան: Հավելեց, որ փորձաքննության ներկայացված ՇՄԱԳ հաշվետվությունը դիտարկվել է բոլոր համապատասխան մարմինների կողմից, ներկայացված առաջարկություններն ու դիտողությունները ամփոփվել են և հաշվետվությունն ուղարկվել է լրամշակման: Հարությունյանը նշեց, որ շահագրգիռ հանրությունը կարող է դիտողություններն ու առաջարկությունները ներկայացնել ՊՈԱԿ-ին, իսկ ներկաները իրենց հուզող հարցերը կարող են հնչեցնել հանրային լսման ընթացքում: Փորձաքննական գործընթացի վերաբերյալ տեղեկությունները ներկայացնելուց հետո նա խոսքը փոխանցեց ձեռնարկողի ներկայացուցիչներին:

«Քոնսեկոարդ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Արման Խաչատրյանը ներկայացավ, ամփոփ նկարագրեց Ծրագիրը, նշեց, որ ՇՄԱԳ հաշվետվության մշակման ընթացքում իրականացվել են համապատասխան բոլոր ուսումնասիրությունները և հետազոտությունները, ինչի արդյունքում մշակվել է մանրամասն բնապահպանական կառավարման պլան՝ գործունեության ընթացքում հնարավոր ռիսկերը նվազեցնելու և/կամ կանխարգելելու նպատակով: Նա նշեց, որ չնայած այն հանգամանքին, որ

Ծրագրի իրականացման ընթացքում (թե՛ շինարարության փուլում, թե՛ շահագործման) էական բնապահպանական և սոցիալական ռիսկեր չեն ակնկալվում, այնուամենայնիվ մշակվել և ներկայացել են հատուկ միջոցառումներ, որոնցից են օրինակ՝ ջրցանի իրականացումը չոր եղանակային պայմանների ժամանակ, հնարավորինս անաղմուկ տեխնիկայի/սարքավորման ընտրությունը և օգտագործումը, «Պատահական գտածո» գործընթացի ներդրումը, Դիլիջան համայնքի հետ սերտ համագործակցությունը և այլն:

«ԴԻԼԻ» ՍՊԸ-ի տնօրեն Վարդան Ղազարյանը ներկայացավ և մանրամասն նկարագրեց Ծրագրի տեխնիկական և տեխնոլոգիական լուծումները: Նա նշեց, որ կազմակերպությունը արդեն երկար տարիներ գործունեություն է իրականացնում, սերտ համագործակցում է Դիլիջանի համայնքապետարանի հետ և շատ մեծ ուշադրություն է դարձնում իր աշխատակիցների և համայնքի բնակիչների բարեկեցության հետ կապված հարցերին:

Ք. Հարությունյանի կողմից հարց բարձրացվեց ՀՀ օրենսդրությամբ «Դիլիջան ազգային պարկ»-ի տարածքում սահմանված սահմանափակումների վերաբերյալ, հետաքրքրվելով թե ինչ դիրքորոշում ունի Դիլիջան համայնքը այդ հարցի վերաբերյալ և հարցրեց, թե արդյո՞ք գործունեության համար ներկայացված հասցեները գտնվում են համապատասխան գոտում ըստ գոտիավորման քարտեզների:

Լ. Սանթրոսյանը նշեց, որ ներկայացված հասցեները բացակայում են գոտիավորման քարտեզում, սակայն ասաց, որ բացի ՇՄԱԳ փորձաքննական գործընթացից, սույն Ծրագիրը նաև անցնելու է համալիր փորձաքննություն, որի ընթացքում համապատասխան մարմինները կքննարկեն այդ հարցը և կտրամադրեն համապատասխան եզրակացություն: Նա հավելեց, որ այժմ նաև իրականացվում են աշխատանքներ նշված օրենքի վերանայման ուղղությամբ:

Վ. Ղազարյանը նշեց, որ Ծրագրի իրականացման ընթացքում բաց տարածքներում արածեցում չի դիտարկվում, քանի որ ձեռնարկողը պատրաստվում է կառուցել «խելացի գոմեր», ինչը թույլ է տալիս իրականացնել այդ գործընթացը ֆերմայի տարածքում: Ա. Խաչատրյանը հավելեց, որ նոր տարածքների օգտագործում արածեցման նպատակով չի նախատեսվում և հավելեց, որ նմանատիպ գործունեությունները իրականացվում են միայն համայնքի կողմից տրամադրված տարածքներում:

Լ. Սանթրոսյանը հավելեց, որ կարևոր է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ երկար տարիների աշխատանքի ընթացքում մարդիկ հաճախ և սիրով օգտվել են

«ԴԻԼԻ» ընկերության արտադրանքից, ինչը վկայում է այն մասին, որ ընկերությունը ձեռք է բերել մարդկանց վստահությունը և մատակարարում է որակյալ արտադրանք, իսկ արտադրության ընդլայնումը կհանգեցնի սոցիալական և տնտեսական դրական ազդեցության:

Ք. Հարությունյանի և Լ. Սանթրոսյանի միջև քննարկում ծավալվեց համայնքի կողմից տրամադրված ավազանու որոշման քաղվածի վերաբերյալ, այնուհետև Ք. Հարությունյանը հետաքրքրվեց, թե արդյո՞ք առկա է Դիլիջանի քաղաքաշինական և ներդրումների խրախուսման խորհրդի եզրակացությունը:

Լ. Սանթրոսյանը նշեց, որ եզրակացությունը առկա է և իրենք դա կարող են տրամադրել ՊՈԱԿ-ին:

Ք. Հարությունյանը հետաքրքրվեց ՇՄԱԳ հաշվետվությունում ներկայացված գոմաղբի քանակի վերաբերյալ:

Ա. Խաչատրյանը և Վ. Ղազարյանը ներկայացրեցին հարցի պարզաբանումը:

Ք. Հարությունյանը հարց բարձրացրեց սանիտարապաշտպանիչ գոտու ապահովման վերաբերյալ, նշելով, որ գոմաղբի պահեստարանի առկայության դեպքում գոտին պետք է սահմանված լինի 500 մ շառավղով:

Ա. Խաչատրյանը նշեց, որ արտանետման աղբյուրից 300 մ շառավղով առկա չեն բնակելի շենք-շինություններ, իսկ գոմաղբի պահեստարան չի նախատեսվում, քանի որ գոմաղբը փակ ցիկլով տեղափոխվելու է ժամանակավոր կուտակման վայր, այնուհետև՝ դեպի կեսագազի կայան: Վ. Ղազարյանը նաև հավելեց, որ գոմաղբը օգտագործվելու է նաև որպես տակդիր կովերի համար, ինչը նման գործունեություն իրականացնելիս տարածված պրակտիկա է:

Ք. Հարությունյանը հետաքրքրվեց ենթակառուցվածքների հասանելիությունից:

Վ. Ղազարյանը և Ա. Խաչատրյանը նշեցին, որ բոլոր ենթակառուցվածքները (էլեկտրամատակարարում, ջրամատակարարում, գազամատակարարում) հասանելի են գործող արտադրական տարածքում և նոր կառուցվող արտադրական տարածքի համար դրանք նույնպես կապահովվեն արդեն իսկ հասանելի մոտակա կետերից:

Ք. Հարությունյանը խնդրեց ներկայացնել տարածքի կանաչապատման և բարեկարգման վերաբերյալ նախատեսվող գործողությունները:

Ա. Խաչատրյանը նշեց, որ Ծրագրի իրականացման շրջանակներում նախատեսվում է իրականացնել տարածքի բարեկարգում և կանաչապատում՝ տեխնիկական առաջադրանքներին համապատասխան:

Ք. Հարությունյանը նշեց, որ առողջապահության նախարարությունը ներկայացնում է պահանջ աղմուկի մակարդակների հաշվարկ ներկայացնելու վերաբերյալ:

Ա. Խաչատրյանը պատասխանեց, որ բնակիչների համար աղմուկի ազդեցությունը գնահատվել է չնչին, քանի որ չեն նախատեսվում աղմուկի շատ բարձր մակարդակներ, շինարարության ընթացքում աշխատանքներն իրականացվելու են միայն ցերեկային ժամերին, ինչպես նաև տարածքում առկա է բնական պատնեշ, որն ունի բավականին մեծ աղմկակլանիչ հատկություն, իսկ տեղում աշխատող մարդկանց հնարավոր բարձր աղմուկի մակարդակից անվտանգ պահելու համար, անհրաժեշտության դեպքում կկիրառվեն համապատասխան միջոցառումներ: Նա նաև հավելեց, որ «ԴԻԼԻ» ՍՊ ընկերությունը շատ լուրջ հետևում է իր աշխատակիցների բարեկեցությանը:

Ք. Հարությունյանը շնորհակալություն հայտնեց ներկաներին և փակեց նիստը:

Հանրային լսմանը ներկա էին Դիլիջանի համայնքապետարանի, ՊՈԱԿ-ի, ձեռնարկողի, «Քոնսեկոարդ» ՍՊԸ-ի ներկայացուցիչները (լուսանկարները կցվում են արձանագրությանը):

Հանրային լսման
պատասխանատու և վարող՝ Ք. Հարությունյան

Ձեռնարկողի ներկայացուցիչ՝ Ա. Խաչատրյան